ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6

ք. Գավառ 23 ապրիլի 2018թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն՝ Ն. Պետրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5279268(հինգ միլիոն երկու հարյուր յոթանասունինն հազար երկու հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի

վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	ԼՂՀ, Ստեփանակերտ,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Վ. Սարգսյան փող. 14շ, բն. 21
Հ/Հ 900171001028	<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08404767	Հ/Հ 16044050085000
	900360

Հավելված N 1
23 ապրիլի 2018թ. կնքված
ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
[redacted]	39111140/301	աթոռներ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Աթոռներ փայտյա կարկասով, բարձր ճնավոր փափուկ թիկնակով և փափուկ նստելատեղով	հատ	9888	1107456	112	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	112	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
[redacted]	39111140/302	աթոռներ	Ռուսաստանի դաշնություն <<ՓԵՍՏ>> ՕՕՕ	Աթոռներ թիկնակով երկաթյա կարկասով,փափուկ նստելատեղով և թիկնակով, նախատեսված սրճարանի համար	հատ	8390	201360	24	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	24	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
[redacted]	39111260/301	աթոռակներ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Աթոռակներ/պուֆիկներ/ երկարությունը և լայնությունը 40սմ, բարձրությունը 50 սմ	հատ	5580	223200	40	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք Գավառ Կենտրոնական հրապարակ 8	40	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:

8	39121360/301	սեղան՝ ղեկավարի	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	միակողմանի 4 հատ դարակներով, բարձրությունը 75 սմ., աշխատանքային հարթության երկարությունը 200 սմ., լայնությունը 90 սմ., հաստությունը 18մմ, փայլուն լամինատից, ունի ստեղնաշարի համար նախատեսված դարակ, կողասեղան և դիմադիր սեղան	հատ	82470	82470	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	1	Ապրանքների մատակարարման ժամկետ՝ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
9	39121400/301	լրագրասեղան	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	100սմx 60սմ չափերի, բարձրությունը 50 սմ փայլուն լամինատից /18մմ/	հատ	12448	62240	5	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	5	Ապրանքների մատակարարման ժամկետ՝ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
10	39531700/301	ուղեգորգեր	Թուրքիա	Ուղեգորգեր 1.25 և 1.5մ լայնությունների, մուգ բորդո, եզրակարված, խավի թելը՝ պոլիպրապիլեն, հենքը՝ պոլիէսթեր, միջնաթելը՝ վուշ, 1մ² մեջ հանգույցների թիվը՝ 551000, չհրկիզվող	մ²	7190	1811880	252	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	252	Ապրանքների մատակարարման ժամկետ՝ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
16	39141350/301	սուրճի սեղաններ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Սուրճի սեղաններ շագանակագույն, փայլուն լամինատից, քառակուսի, կողմը 80 սմ, բարձրությունը 75 սմ,	հատ	12064	72384	6	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	6	Ապրանքների մատակարարման ժամկետ՝ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
17	39121410/301	սեղան՝ համակարգչի	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Սեղան համակարգչի, 120x70x75սմ փայլուն լամինատից, ստեղնաշարի համար նախատեսված դարակով	հատ	21464	107320	5	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	5	Ապրանքների մատակարարման ժամկետ՝ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
18	39132220/301	կախիչներ	<<Ֆոտոն>>	Կախիչներ, բարձրությունը	հատ	11248	78736	7	ՀՀ Գեղարքունիքի	7	Ապրանքների

			ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	120 սմ, լայնությունը 85սմ: Հայելիով 2 երկտեղանոց կախիչներով և գլխարկների համար նախատեսված դարակով					մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8		մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
19	39121520/301	գրապահարաններ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	բարձրությունը 180 սմ, լայնությունը 140 սմ, խորությունը 45 սմ, 4 հարկով- 1-ին հարկը փակ լամինատից 3 դռներով, երկրորդ հարկի բարձրությունը 40սմ- բաց, իսկ 3-4-րդ հարկերը ապակեպատ,	հատ	65042	1235798	19	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	19	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
38	39141 100/301	դարակներ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	եռահարկ լամինատե բաց դարակներով, երկարությունը 200սմ, բարձրությունը 160սմ.,դարակի բարձրությունը՝ 50 սմ.	հատ	41158	246948	6	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	6	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
45	38621200/303	հայելիներ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Հայելիներ լամինատե շրջանակով բարձրությունը 80սմ լայնությունը 50սմ	հատ	7068	49476	7	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	7	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:

Պարտադիր պայման՝ ապրանքները պետք է լինեն չօգտագործված /նոր/

ԳՆՈՐԴ

Ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900171001028
Հ/Հ 08404767

(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

ԼՂՀ, Ստեփանակերտ,
Վ. Սարգսյան փող. 14շ, բն. 21
<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
23 ապրիլի 2018թ. կնքված
ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	39111140/301	աթոռներ				1107456	1107456	1107456	1107456	1107456	1107456	1107456	1107456	1107456	1107456
3	39111140/302	աթոռներ				201360	201360	201360	201360	201360	201360	201360	201360	201360	201360
4	39111260/301	աթոռակներ				223200	223200	223200	223200	223200	223200	223200	223200	223200	223200

5	39121360/301	սեղան՝ ղեկավարի				82470	82470	82470	82470	82470	82470	82470	82470	82470	82470
6	39121400/301	լրագրասեղան				62240	62240	62240	62240	62240	62240	62240	62240	62240	62240
10	39531700/301	ուղեգորգեր				1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880
16	39141350/301	սուրճի սեղաններ				72384	72384	72384	72384	72384	72384	72384	72384	72384	72384
17	39121410/301	սեղան՝ համակարգչի				107320	107320	107320	107320	107320	107320	107320	107320	107320	107320
18	39132220/301	կախիչներ				78736	78736	78736	78736	78736	78736	78736	78736	78736	78736
19	39121520/301	գրապահարաններ				1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798
38	39141100/301	դարակներ				246948	246948	246948	246948	246948	246948	246948	246948	246948	246948

45	38621200/303	հայելիներ				49476	49476	49476	49476	49476	49476	49476	49476	49476	49476

ԳՆՈՐԴ

Ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7

ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն

Հ/Հ 900171001028

08404767

ՎԱՃԱՌՈՂ

ԼՂՀ, Ստեփանակերտ,

Վ. Սարգսյան փող. 142, բն. 21

<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ

Հ/Հ 16044050085000

ՀՎՀՀ 90036001

Հավելված N 3
23 ապրիլի 2018թ. կնքված
ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
23. ապրիլի 2018թ. կնքված
ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

23.04.2018թ. կնքված N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի

ք. Գավառ 29 մայիսի 2018թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն՝ Ն. Պետրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների նախարարության 24.05.2018թ. N 03/26-1/9337-18 գրությունը և կողմերի միջև 23.04.2018թ. կնքված N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6 ծածկագրով գնման պայմանագրի 8.5 կետի դրույթները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Սույն Համաձայնագրով ապրանքների ընդհանուր գինը կազմում է 3842240(երեք միլիոն ութ հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

1.2 Հաստատել տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցը (հավելված N 1) և վճարման ժամանակացույցը (հավելված N 2) նոր խմբագրությամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	ԼՂՀ, Ստեփանակերտ,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Վ. Սարգսյան փող. 14$_2$, բն. 21
Հ/Հ 900171001028	<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08404767	Հ/Հ 16044050085000
	ՀՎՀՀ 90036001

Հավելված N 1
<<23>> ապրիլի 2018թ. կնքված
ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6 ծածկագրով պայմանագրի
29 մայիսի 2018թ. կնքված N 1 համաձայնագիր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
4	39111260/301	աթոռակներ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Աթոռակներ/պուֆիկներ/ երկարությունը և լայնությունը 40սմ, բարձրությունը 50 սմ	հատ	5580	223200	40	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	40	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
5	391 21360/301	սեղան՝ ղեկավարի	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	միակողմանի 4 հատ դարակներով, բարձրությունը 75 սմ., աշխատանքային հարթության երկարությունը 200 սմ., լայնությունը 90 սմ., հաստությունը 18մմ, փայլուն լամինատից, ունի ստեղնաշարի համար նախատեսված դարակ, կողասեղան և դիմադիր սեղան	հատ	82470	82470	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	1	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
6	39121400/301	լրագրասեղան	<<Ֆոտոն>> ՍՊԸ	100սմx 60սմ չափերի, բարձրությունը 50 սմ	հատ	12448	62240	5	ՀՀ Գեղարքունիքի	5	Ապրանքների մատակարարման ժամկետ

			Հայաստանի Հանրապետություն	փայլուն լամինատից /18մմ/					մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8		սահմանել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
10	39531700/301	ուղեգորգեր	Թուրքիա	Ուղեգորգեր 1.25 և 1.5մ լայնությունների, մուգ բորդո, եզրակարված, խավի թելը՝ պոլիպրապիլեն, հենքը՝ պոլիէսթեր, միջնաթելը՝ վուշ, 1մ² մեջ հանգույցների թիվը՝ 551000, չիրկիզվող	մ²	7190	1811880	252	<< Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	252	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
16	39141350/301	սուրճի սեղաններ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Սուրճի սեղաններ շագանակագույն, փայլուն լամինատից, քառակուսի, կողմը 80 սմ, բարձրությունը 75 սմ,	հատ	12064	72384	6	<< Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	6	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
17	39121410/301	սեղան՝ համակարգչի	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	Սեղան համակարգչի, 120x70x75սմ փայլուն լամինատից, ստեղնաշարի համար նախատեսված դարակով	հատ	21464	107320	5	<< Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	5	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
19	39121520/301	գրապահարաններ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	բարձրությունը 180 սմ, լայնությունը 140 սմ, խորությունը 45 սմ, 4 հարկով- 1-ին հարկը փակ լամինատից 3 դռներով, երկրորդ հարկի բարձրությունը 40սմ- բաց, իսկ 3-4-րդ հարկերը ապակեպատ,	հատ	65042	1235798	19	<< Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	19	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:
38	39141100/301	դարակներ	<<Ֆոտոն>> ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն	եռահարկ լամինատե բաց դարակներով, երկարությունը 200սմ, բարձրությունը 160սմ.,դարակի բարձրությունը՝ 50 սմ.	հատ	41158	246948	6	<< Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 8	6	Ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 30 օրացուցային օր:

Պարտադիր պայման՝ ապրանքները պետք է լինեն չօգտագործված /նոր/

ԳՆՈՐԴ

Ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7

ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն

Հ/Հ 900171001028

ՀՎՀՀ 08404767

(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

ԼՂՀ, Ստեփանակերտ,

Վ. Սարգսյան փող. 142, բն. 21

<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ

Հ/Հ 16044050085000

ՀՎՀՀ 90036001

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
<<23>> ապրիլի 2018թ. կնքված
ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01-6 ծածկագրով պայմանագրի
29 մայիսի 2018թ. կնքված N 1 համաձայնագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	39111260/301	աթոռակներ					223200	223200	223200	223200	223200	223200	223200	223200	223200
5	39121360/301	սեղան՝ ղեկավարի					82470	82470	82470	82470	82470	82470	82470	82470	82470
6	39121400/301	լրագրասեղան					62240	62240	62240	62240	62240	62240	62240	62240	62240

10	39531700/301	ուղեգորգեր					1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880	1811880
16	39141350/301	սուրճի սեղաններ					72384	72384	72384	72384	72384	72384	72384	72384	72384
17	39121410/301	սեղան՝ համակարգչի					107320	107320	107320	107320	107320	107320	107320	107320	107320
19	39121520/301	գրապահարաններ					1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798	1235798
38	39141100/301	դարակներ					246948	246948	246948	246948	246948	246948	246948	246948	246948

ԳՆՈՐԴ

Ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900171001028
ՀՎՀՀ 08404767

ՎԱՃԱՌՈՂ

ԼՂՀ, Ստեփանակերտ,
Վ. Սարգսյան փող. 142, բն. 21
<<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001